Համախմբված Ֆինանսական հաշվետվություններ և

Անկախ աուդիտորական եզրակացություն

" Ապավեն "

Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն

31 դեկտեմբերի 2021թ.

Բովանդակություն

	Էջ
Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	5
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	8
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9

"Ֆոր Էյ Քնսալթինգ" ՓԲԸ "Four A Consulting" CJSC
audit accounting advisory assurance

ՀԱՊՀԿ Ռեեստր 1 20 0219
Հասցե Նալբանդյան50/136 , քերևանՀՀ,
Հեռախոս +374(10) 52 08 47

www. 4aconsulting.am
info@4aconsulting.am

CAA NGO Register 1 20 0219
Address Nalbandyan 50/136, Yerevan, RA
Telephone +374(10) 52 08 47

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

"Ապավեն" ՍՊԸ-ի մասնակիցներին ,

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել "Ապավեն" ՍՊԸ-ի (Ընկերություն) և նրա դուստր ընկերության (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2021թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, և համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Խմբի 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերը ճշմարիտ և իրական պատկերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *"Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար"* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված "Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի" (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանքներ

Խմբի 2020թ. համախմբված ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորական կազմակերպության կողմից, ով 2021թ. հուլիսի 26-ին արտահայտել է չձևափոխված կարծիք այդ հաշվետվությունների վերաբերյալ:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր ՖՀՄՍ-ների համաձայն, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Համախմբված Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Խմբի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Խումբը լուծարելու կամ Խմբի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլ ընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են համախմբված ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը:

Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

29 հունիսի 2022թ.

Անիկ Մարտիրոսյան
Տնօրեն-Բաժնետեր

Անի Խաչատրյան ACCA
Աուդիտոր-բաժնետեր

«ՖՈՐ Է ԲԱՍՍԼԻԹԻՆԳ»
"FOUR A CONSULTING"
00148693

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	1,625,697	1,621,353
Ներդրումային գույք		37,357	39,324
Ոչ նյութական ակտիվներ		2,229	1,671
Հետաձգված հարկային ակտիվներ	5	31,773	90,290
Տրամադրված երկարաժամկետ փոխառություններ	6	-	-
		1,697,056	1,752,638
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	7	34,407	50,000
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	2,865,619	2,558,313
Տրամադրված փոխառություններ	6	6,000	59,186
Կանխավճարներ շահութահարկի գծով		-	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	9	1,062,571	1,151,479
		3,968,597	3,818,978
Ընդամենը ակտիվներ		5,665,653	5,571,616
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուստներ	10		
Կանոնադրական կապիտալ		1,251	1,251
Պահուստներ		371,850	343,600
Կուտակված շահույթ		4,492,655	4,332,742
		4,865,756	4,677,593
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ		65,402	72,602
Վարձակալության գծով ոչ ընթացիկ պարտավորություններ	11	-	85,912
		65,402	158,514
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	12	567,834	543,880
Վարձակալության գծով ոչ ընթացիկ պարտավորություններ	11	64,855	127,193
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		101,806	64,436
		734,495	735,509
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		5,665,653	5,571,616

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2022թ. հունիսի 29-ին՝

Գագիկ Աղաջանյան — Ավետ Միքայելյան

Գործադիր տնօրեն — Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 31-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ պայմանագրերից	13	25,240,785	21,780,709
Այլ եկամուտ		364,876	117,322
Ընդամենը հասույթ		25,605,661	21,898,031
Բեռնարկղային մուլտիմոդալ փոխադրումների և ավտոմոբիլային բեռնափոխադրումների ծախսեր		(19,088,357)	(15,689,364)
Փոխհատուցումներ աշխատակիցներին		(757,526)	(747,378)
Մաշվածության, ամորտիզացիայի և հիմնական միջոցների սպասարկման ծախսեր		(452,806)	(367,168)
Վառելիքի ծախսեր		(446,882)	(358,536)
Գործուղման ծախսեր		(219,496)	(216,882)
Այլ ծախսեր	14	(362,527)	(590,250)
Գործառնական գործունեությունից շահույթ		4,278,067	3,928,453
Ֆինանսական եկամուտ, զուտ		7,309	29,445
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ/(վնաս)	15	(61,250)	(32,236)
Շահույթ մինչև հարկերը		4,224,126	3,925,662
Շահութահարկի գծով ծախս	16	(827,963)	(734,013)
Տարվա շահույթ		3,396,163	3,191,649
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		3,396,163	3,191,649

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 31-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Պահուստներ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	1,251	319,400	3,911,293	4,231,944
Տարվա շահույթ	-	-	3,191,649	3,191,649
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	3,191,649	3,191,649
Շահաբաժիններ		-	(2,746,000)	(2,746,000)
Գործարքներ սեփականատերերի հետ	-	-	(2,746,000)	(2,746,000)
Փոխանցում պահուստներին	-	24,200	(24,200)	-
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,251	343,600	4,332,742	4,677,593
Տարվա շահույթ			3,396,163	3,396,163
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք			3,396,163	3,396,163
Շահաբաժիններ			(3,208,000)	(3,208,000)
Գործարքներ սեփականատերերի հետ			(3,208,000)	(3,208,000)
Փոխանցում պահուստներին		28,250	(28,250)	-
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,251	371,850	4,492,655	4,865,756

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 31-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ	3,396,163	3,191,649
Ճշգրտումներ՝		-
Մաշվածություն և ամորտիզացիա	213,856	179,169
Հիմնական միջոցների օտարումից (օգուտ)/վնաս	(11,845)	(1,509)
Հիմնական միջոցների արժեզրկումից կորուստներ	50,245	-
Տոկոսային ծախս	8	1,488
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	(7,200)	(7,200)
Շահութահարկի գծով ծախս	827,963	734,013
Ֆինանսական եկամուտ	(7,317)	(30,933)
Կասկածելի դեբիտորական պարտքերի պահուստի շարժ	(134,949)	-
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	61,250	32,236
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	4,388,174	4,098,913
Պաշարների փոփոխություն	15,593	(11,792)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(225,470)	(39,056)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	38,077	(43,063)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	4,216,374	4,005,002
Վճարված տոկոսներ	(8)	(1,488)
Վճարված շահութահարկ	(732,076)	(684,608)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	3,484,290	3,318,906
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(273,354)	(144,237)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	18,163	3,750
Տրամադրված փոխառությունների մարում	53,573	195,608
Ստացված տոկոսային եկամուտ	7,317	11,328
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(194,301)	66,449
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ֆինանսական վարձակալության ստացում / (մարում)	(145,207)	
Վճարված շահաբաժիններ	(3,208,000)	(2,574,479)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(3,353,207)	(2,574,479)
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ/(նվազում)	(63,218)	810,876
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(25,690)	20,076
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	1,151,479	320,527
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	1,062,571	1,151,479

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 31-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Ապավեն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (Մայր ընկերություն) իրավաբանական անձ հանդիսացող առևտրային կազմակերպություն է, որը գրանցվել է Հայաստանի Հանրապետության պետական ռեգիստրի կողմից՝ 1995թ. փետրվարի 7-ին՝ համաձայն 1993թ. նոյեմբերի 30-ին հիմնադիրների միջև կնքված հայ-վրացական համատեղ ձեռնարկություն հիմնադրելու վերաբերյալ պայմանագրի, որպես Հայ-Վրացական «Ապավեն» համատեղ ձեռնարկություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն: 1999թ. դեկտեմբերի 14-ին Մայր ընկերությունը անվանափոխվել է «Ապավեն» ՍՊԸ-ի:

Մայր ընկերության սեփականատերերն են՝

- Արսեն Ղազարյանը 50% մասնակցությամբ
- Գագիկ Աղաջանյանը 50% մասնակցությամբ:

Մայր ընկերությունը անդամակցում է FIATA և ՀՏԱՄ ասոցիացիաներին:

Մայր ընկերության հիմնական գործունեությունն է միջազգային բեռնափոխադրումների իրականացումը: Դուստր ընկերությունը իրականացնում է մաքսային տերմինալի ծառայություններ, բեռնաթափման և բեռնամշակման ծառայություններ:

Մայր ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Արարատյան փողոց 95:

2021թ. Խմբի աշխատողների տարեկան միջին թիվը կազմել է 185 մարդ (2020թ.՝ 188 մարդ):

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

2.2 Ճանաչման հիմքեր

Համախմբված Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացվել են իրական արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Խմբի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ի համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Խմբի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 17-ում:

2.5 Խմբի կողմից ընդունված նոր և փոփոխված ՖՀՄՍ ստանդարտներ, որոնք ընդունվել են ընթացիկ տարում

Ընթացիկ տարում Խումբը ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2021թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2021թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2021թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը
Տարբեր	*Ուղենշային փոկոսադրույքի բարեփոխում (փուլ 2) (ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 39, ՖՀՄՍ 16, ՖՀՄՍ 4, ՖՀՄՍ 7 փոփոխություններ)*

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի] կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը	Տվյալ ամսաթվին կամ դրանից հետո սկսվող հաշվետու

		ժամանակաշրջանների համար կիրառելի
ՖՀՄՍ 16	COVID-19-ի հետ կապված վարձակալության արտոնություններ 2021թ. հունիսի 30-ից հետո 2021թ.	1 ապրիլի
ՖՀՄՍ 3	Հղումներ հայեցակարգային հիմունքներին (ՀՀՄՍ 3 փոփոխություններ)	1 հունվարի 2022թ.
ՀՀՄՍ 16	Մուտքեր նախքան նախատեսված օգտագործումը (ՀՀՄՍ 16 փոփոխություններ)	1 հունվարի 2022թ.
ՀՀՄՍ 37	Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսումներ (ՀՀՄՍ 37 փոփոխություններ)	1 հունվարի 2022թ.
ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16	2018-2020թթ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ (ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 9, ՀՀՄՍ 41, ՖՀՄՍ 16 փոփոխություններ)	1 հունվարի 2022թ.
ՖՀՄՍ 17	Ապահովագրության պայմանագրեր	1 հունվարի 2023թ.
ՖՀՄՍ 4	ՖՀՄՍ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարացում (ՖՀՄՍ 4 փոփոխություններ)	1 հունվարի 2023թ.
ՖՀՄՍ 17	ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառում – համադրելի տեղեկատվություն (ՖՀՄՍ 17 փոփոխություն)	1 հունվարի 2023թ.
ՀՀՄՍ 1	Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)	1 հունվարի 2023թ.
ՀՀՄՍ 12	Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)	1 հունվարի 2023թ.

2.6 Դուստր ընկերություն

Մայր ընկերությունն ունի հետևյալ դուստր ընկերությունը.

2021թ. դեկտեմբերի 31 դուստր ընկերություն	Մասնաբաժին %	Գրանցման երկիր	Գրանցման ամսաթիվ	Գործունեության ոլորտ
Ապավեն Տերմինալ ՓԲԸ	100	ՀՀ	1997	Մաքսային տերմինալ, բեռնաթափման և բեռնամշակման ծառայություններ

Մայր ընկերությունը դուստր ընկերությունը ձեռք է բերել 2010թ.:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Խմբի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքները.

	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ռուբլի	6.42	7.02
ԱՄՆ դոլար	480.14	522.59
Եվրո	542.61	641.11

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում: Իրական արժեքով արտահայտված ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ներառվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում, բացառությամբ այն ոչ դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած տարբերությունների, որոնց վերաբերող շահույթը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարներ, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները: Այս ակտիվների մաշվածությունը հաշվարկվում է այնպես, ինչպես որ նմանատիպ հիմնական միջոցների մաշվածությունը, երբ դրանք դառնում են պատրաստ իրենց նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի ու ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	- 20 տարի
Մեքենաներ և սարքավորումներ	- 5 տարի
Տրանսպորտային միջոցներ	- 5-8 տարի
Տնտեսական գույք	- 5-8 տարի
Այլ	- 1-5 տարի:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Խմբի կողմից և ունեն օգտակար ծառայության ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:
Ամորտիզացիան ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 10 տարի համակարգչային ծրագրի և այլ ոչ նյութական ակտիվների համար:

3.4 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվներ արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է , ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեն: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.5 Վարձակալված ակտիվներ

Խումբը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն պայմանագրի գործողության սկզբում: Վարձակալության պայմանագիրն իրավունք է տալիս որոշակի ժամանակահատվածում սահմանելու որոշակիացված ակտիվի օգտագործման ուղղությունները և ստանալու որոշակիացված ակտիվից բոլոր տնտեսական օգուտները՝ փոխհատուցման դիմաց:

Վարձակալության ճանաչումը և չափումը որպես վարձակալ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Խումբը իր ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Խմբի կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները):

Խումբը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Խումբը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան:

Մեկնարկի ամսաթվին Խումբը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Խմբին լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզմունք:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է զրոյի:

Խումբը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

3.6 Ներդրումային գույք

Ներդրումային գույքը, որը պահվում է վարձակալական եկամուտ ստանալու և/կամ դրա արժեքի աճի նպատակով, սկզբնապես հաշվառվում է սկզբնական արժեքով՝ ներառելով գործարքի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներդրումային գույքը չափվում է իրական արժեքով:

Ներդրումային գույքի իրական արժեքի փոփոխությունից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն առաջացել է:

Ներդրումային գույքից ստացված վարձակալական եկամուտը և գործառնական ծախսերը ներառված են համապատասխանաբար այլ եկամուտներում և այլ ծախսերում:

3.7 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով միջին կշռված մեթոդը և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.8 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Խումբը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Խմբի ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը արտացոլված է այլ ծախսերում: Խմբի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն թիվ 20.2-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին.

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Այն դեպքերում, երբ գեղչման ազդեցությունը աննշան է, գեղչում չի կատարվում: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Խմբի դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով
Ֆինանսական ակտիվները, որոնք պահվում են «հավաքագրման համար պահվող կամ «հավաքագրման և վաճառքի համար պահվող բիզնես մոդելներից տարբեր մոդելի շրջանակներում, դասակարգվում են որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով: հետագայում, անկախ բիզնես մոդելից, բոլոր այն ֆինանսական ակտիվները, որոնց պայմանագրային դրամական հոսքերը չեն հանդիսանում միայն մայր գումարի և հաշվարկված տոկոսի մարում, հաշվառվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները դասակարգվում են այս կատեգորիայում, բացառությամբ հեջավորման գործիքների, որոնց համար գործում են հեջավորման հաշվառմանը ներկայացվող պահանջները:

Այս կատեգորիան ներառում է նայև ներդրումը սեփական կապիտալում: Խումբը հաշվառում է ներդրումը իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով և ցուցակված սեփական կապիտալի բաժնետոմսերը հաշվառել իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում: Իրական արժեքը որոշվել է ՖՀՄՍ 9-ի պահանջներին համապատասխան, որը չի թույլ տալիս սկզբնական արժեքով չափումը:

Այս կատեգորիայում դասակարգված ակտիվները չափվում են իրական արժեքով՝ օգուտը կամ կորուստները ճանաչելով շահույթում կամ վնասում: Այս կատեգորիայում դասակարգված ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշվում է գործող շուկայի գործարքներին հղում կատարելով կամ, այն պարագայում, երբ առկա չէ գործող շուկա՝ կիրառելով գնահատման մեթոդ:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում
Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը: ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են տրված վարկերը և փոխառային տիպի այլ ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով և իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում, առևտրային դեբիտորական պարտքերը, պայմանագրային ակտիվները որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն և վարկային պարտավորությունները և որոշ ֆինանսական երաշխավորության պայմանագրերը, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթում կամ վնասում:

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Խմբի՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Խումբը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ (Փուլ 1) և
- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ (Փուլ 2):

Փուլ 3-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները, մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր և պայմանագրային ակտիվներ
Խումբը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը և պայմանագրային ակտիվները օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Խումբը օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից

Խումբը գնահատում է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը
Խմբի ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և փոխառությունները, առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները և ածանցյալ ֆինանսական գործիքները: Խմբի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն թիվ 20.2-ում:

Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Իրական արժեքի և նոմինալ արժեքի տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ փոխառությունը ստացվել է սեփականատերերից: Այս դեպքում իրական և նոմինալ արժեքների միջև տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում որպես լրացուցիչ կապիտալ: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.9 Սեփական կապիտալ

Խմբի կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.10 Պետական շնորհներ

Պետական շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Խումբը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Պետական շնորհները, որոնց հիմնական պայմանը Խմբի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ և սիստեմատիկորեն փոխանցվում են շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Չմաշվող ակտիվներին (հողերին) վերաբերող շնորհները, որոնց կցված են որոշակի պարտականությունների կատարում, շահույթում կամ վնասում ճանաչվում են այն ժամանակաշրջաններում, որոնց ընթացքում տեղի են ունեցել այդ պարտականությունների կատարման հետ կապված ծախսումները: Հողամասի ձևով ստացված շնորհը շահույթում կամ վնասում ճանաչվում է հողամասի վրա գտնվող շենքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ պետական շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Պետական շնորհը, որը հատկացվում է Խմբին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

3.11 Հատուցումներ աշխատակիցներին

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

3.12 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ, ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Խումբը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

3.13 Հասույթի ճանաչում

Խմբի հասույթը առաջանում է հիմնականում բեռնարկղային մուլտիմոդալ փոխադրումներից և ավտոմոբիլային բեռնափոխադրումներից, տերմինալի, պահեստային ծառայությունների մատուցումից և վարձակալությունից:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Խումբը առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

1 Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը
2 Բացահայտել կատարման պարտականությունները
3 Որոշել գործարքի գինը
4 Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև
5 Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են:

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Խումբը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

Խումբը ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում որպես հաճախորդներից ստացված կանխավճարներ: Նման ձևով, եթե Խումբը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Խումբը ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

Հասույթ պայմանագրերից

Բեռնարկղային մուլտիմոդալ փոխադրումներից ստացված հասույթը ներառում է՝ դատարկ բեռնարկղի տրամադրումն առաքողի պահեստում, բեռնված և կապարակնքված բեռնարկղերի երկաթգծային, նավային և ավտոմոբիլային փոխադրումները մինչև ստացողի պահեստ, պահեստային ծառայությունները և մաքսային ձևակերպումները:

Հասույթ պահեստային ծառայություններից

Պահեստային ծառայություններից ստացված հասույթը ներառում է՝ ապրանքների պահպանումը, բեռնման և բեռնաթափման աշխատանքները, բեռների ընտրությունը և կոմպլեկտավորումը, ապրանքների մշակումը:

Ստացված հասույթը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որում ծառայությունները մատուցվել են: Այն դեպքերում, երբ ծառայությունների մատուցումն անավարտ է հաշվետու ժամանակաշրջանի վերջում, հասույթը ճանաչվում է կատարված ծառայություններին համամասնորեն:

Վարձակալությունից եկամուտ

Գործառնական վարձակալությունների գծով ստացված վճարումները ճանաչվում են շահույթում կամ վնասում գծային մեթոդով՝ վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են «այլ եկամուտ» հոդվածում:

Տոկոսային եկամուտ

Տոկոսային եկամուտը ճանաչվում է համամասնության հիմունքով՝ մնացորդային արժեքի նկատմամբ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքը, որը զեղչում է ակնկալվող ապագա դրամական միջոցների ներհոսքերը ֆինանսական ակտիվի ակնկալվող ժամկետում՝ մինչև ակտիվի զուտ հաշվեկշռային արժեքը

4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Հող, շենքեր և շինություն-ներ, կառուցվածք	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտ-տային միջոցներ	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք					
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	983,563	548,708	1,399,524	156,934	3,088,729
Ավելացում	-	420	287,313	8,019	295,752
Պակասեցում	-	-	(14,266)	(358)	(14,624)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	983,563	549,128	1,672,571	164,595	3,369,857
Ավելացում	176,331	37,365	7,851	51,041	272,588
Պակասեցում	-	(3,676)	(46,913)	(64,971)	(115,560)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,159,894	582,817	1,633,509	150,665	3,526,885
Կուտակված մաշվածություն և արժեզրկում					
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	141,796	447,890	845,078	149,918	1,584,682
Տարվա հաշվարկ	22,328	20,213	127,628	6,036	176,205
Դուրսգրում	-	(91)	(12,292)	-	(12,383)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	164,124	468,012	960,414	155,954	1,748,504
Տարվա հաշվարկ	50,553	18,424	107,962	34,741	211,680
Դուրսգրում	-	(3,676)	(40,594)	(14,726)	(58,996)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	214,677	482,760	1,027,782	175,969	1,901,188
Հաշվեկշռային արժեք					
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	819,439	81,116	712,157	8,641	1,621,353
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	945,217	100,057	605,727	(25,304)	1,625,697

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չունի գրավադրված հիմնական միջոցներ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չունի գրավադրված հիմնական միջոցներ):

5 Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Տարեսկզբի մնացորդ	90,290	79,428
Ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչված փոխհատուցում	(58,517)	10,862
Տարեվերջի մնացորդ	31,773	90,290

2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվարի 2021թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2021թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Հիմնական միջոցներ	17,568	2,320	19,888
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	76,054	(60,976)	15,078
Արձակուրդի պահուստ	3,746	(215)	3,531
	97,368	(58,871)	38,497
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Ներդրումային գույք	7,078	(354)	6,724
	7,078	(354)	6,724
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	90,290	(58,517)	31,773

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվարի 2020թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2020թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Հիմնական միջոցներ	22,190	(4,622)	17,568
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	60,532	15,522	76,054
Արձակուրդի պահուստ	4,282	(536)	3,746
	87,004	10,364	97,368
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Ներդրումային գույք	7,576	(498)	7,078
	7,576	(498)	7,078
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	79,428	10,862	90,290

6 Տրամադրված փոխառություններ

Տրամադրված փոխառությունները հիմնականում ներառում են «Դելտա Նովել ՍՌԼ» ընկերությանը տրամադրված փոխառությունը: 31.12.2021թ դրությամբ այն ամբողջությամբ մարվել է :

31.12.2021թ.-ի փոխառության մնացորդը կազմում է 6,000 հազ. դրամ: Փոխառությունը Մայր ընկերությունը տրամադրել է «Մարան» ՍՊԸ-ին:

7 Պաշարներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վառելիք	12,900	11,222
Պահեստամասեր	21,146	38,411
Այլ	361	367
	34,407	50,000

2021թ. դեկտեմբերի 31-ի և 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը չունի գրավադրված պաշարներ:

8 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ		
Առևտրային դեբիտորական պարտքեր	2,342,612	2,182,049
Ակնկալվող պարտքային կորուստների համար պահուստ	(83,766)	(422,522)
	2,258,846	1,759,527
Հարկեր և այլ վճարներ	317,529	292,448
Տրված կանխավճարներ	280,963	503,001
Դեբիտորական պարտքեր ստացվելիք շահաբաժինների գծով	2,159	-
Այլ դեբիտորական պարտքեր	6,122	3,337
	2,865,619	2,558,313

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Առևտրային դեբիտորական պարտքի հավաքագրելիությունը որոշելիս հաշվի է առնվում դեբիտորի պարտքի մարման ժամանակացույցի ցանկացած փոփոխություն՝ սկսած պարտքի առաջացման պահից մինչև հաշվետու ամսաթիվը:

Ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

Հարկերը և այլ վճարումները ներառում են ՀՀ ոստիկանության դեպոզիտ հաշվին կատարված կանխավճարները, որոնք կազմում են 250,000 հազար դրամ: Համաձայն ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 22-ի h.923-Ն որոշման, Մայր Ընկերությունը ձեռք է բերել բաժնետոմսեր: Վերոհիշյալ որոշումը ՀՀ քրեական ոստիկանության գլխավոր վարչությունում հարցաքննվել է 2020թ՝. գնման գինը սակարկվում է, փորձ է արվում վերագնահատել այն: Քննության ընթացքում կազմակերպության բնականոն աշխատանքը չխաթարելու կամ սահմանափակումներ չկիրառելու համար, Մայր Ընկերությունը ՀՀ ոստիկանության դեպոզիտային հաշվին փոխանցել է 250,000 հազար դրամ:

Դեբիտորական պարտքերի գծով պահուստի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	422,522	336,289
Դեբիտորական պարտքերի դուրսգրում	-	-
Պահուստի հակադարձում	(338,756)	(5,648)
Տարվա ընթացքում պահուստի աճ	-	91,881
Տարեվերջի մնացորդ	83,766	422,522

9 Դրամական միջոցներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամարկղ	21,601	20,571
Մնացորդներ բանկերում ՀՀ դրամ	435,251	778,736
Մնացորդներ բանկերում արտարժույթ	605,719	352,172
	1,062,571	1,151,479

10 Սեփական կապիտալ

10.1 Կանոնադրական կապիտալ

Մայր Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1,251 հազար դրամ, որը բաշխված է հետևյալ մասնակիցների միջև:

	2021թ.	2020թ.
Արսեն Ղազարյան	50%	50%
Գագիկ Աղաջանյան	50%	50%

10.2 Պահուստներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Պահուստային կապիտալ	188	188
Ապահովագրական պահուստ	371,662	343,412
	371,850	343,600

Կուտակված շահույթից պահուստային կապիտալին կատարվում են հատկացումներ, ինչը կարգավորվում է Մայր Ընկերության կանոնադրությամբ՝ համաձայն որի պահուստային կապիտալը կանոնադրական կապիտալի 15%-ի չափ է: Մայր Ընկերությունը ստեղծում է նաև ապահովագրական պահուստ ամենամյա շահույթի մինչև 5%-ի չափով կատարված հատկացումներից՝ ապագա վնասները ծածկելու նպատակով:

10.3 Շահաբաժիններ

2021թ.-ին մասնակիցներին հայտարարվել է 3,208,000 հազար դրամ շահաբաժին, 2020թ.-ին՝ 2,746,000 հազար դրամ:

11 Վարձակալության գծով պարտավորություններ

Վարձակալության գծով պարտավորությունները ներկայացված են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում հետևյալ կերպ.

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընթացիկ	64,855	127,193
Ոչ ընթացիկ	-	85,912
	64,855	213,105

Վարձակալության գծով պարտավորությունը առաջացել է ԱԿԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի նկատմամբ:

12 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	416,167	276,570
Հաճախորդներից կանխավճարներ	25,572	24,522
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	14,277	1,262
Վճարվելիք հարկեր և տուրքեր	23,385	49,194
Արձակուրդի պահուստ	19,618	20,811
Վճարվելիք շահաբաժիններ	68,695	171,521
Այլ	120	-
	567,834	543,880

Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Խումբը ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություն, որն ապահովում է բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

13 Հասույթ պայմանագրերից

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Բեռնարկղային մուլտիմոդալ և ավտոմոբիլային փոխադրումներ	24,797,815	21,204,544
Տերմինալ ծառայություններ	442,970	576,165
	25,240,785	21,780,709

Պայմանագրերից հասույթը ճանաչվում է ժամանակի ընթացքում:

14 Այլ ծախսեր

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Բարեգործական ծախսեր	20,147	187,589
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	36,772	43,015
Պահպանության և անվտանգության ծախսեր	35,406	50,612
Ապահովագրական ծախսեր	37,532	53,543
Անհուսալի դեբիտորական պարտքերի և այլ ակտիվների դուրս գրման գծով ծախսեր	-	96,848
Արտարժույթի փոխարկման և բանկային ծախսեր	61,574	63,887
Հիմնական միջոցների արժեզրկումից կորուստներ	50,245	-
Այլ	120,851	94,756
	362,527	590,250

15 Այլ ֆինանսական հոդվածներ, զուտ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը		
Դրամական միջոցներ	(25,690)	20,076
Դեբիտորական պարտքեր	(53,113)	44,332
Տրամադրված փոխառություններ	387	9,730
Ֆինանսական վարձակալություն	3,043	(32,726)
Կրեդիտորական պարտքեր	14,123	(73,648)
	(61,250)	(32,236)

16 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	769,446	744,875
Հետաձգված հարկ (տես՝ ծանոթագրություն 5)	58,517	(10,862)
	827,963	734,013

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունա-վետ հարկային դրույքաչափ (%)	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունա-վետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների)	4,224,126		3,925,662	
Շահութահարկ՝ 18% դրույ-քաչափով (2020թ.՝ 18%)	760,343	18.00	706,619	18.00
(Չհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, զուտ	67,620	1.60	27,394	0.70
Շահութահարկի գծով ծախս	827,963	19.60	734,013	18.70

17 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի և այլ ցուցանիշների վրա, ներառյալ՝ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք համարվում են ընդունելի տվյալ հանգամանքներում:

17.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Խումբը իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, չեն համապատասխանում իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները

Խմբի ղեկավարությունը հավատացած է, որ այդ ակտիվների գնահատված օգտակարության ժամկետները էականորեն չեն տարբերվում սպասվելիք տնտեսական ժամկետներից: Եթե այս գնահատումները փոխվեն ապա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունները էականորեն կտարբերվեն:

Դեբիտորական պարտքերի հավաքագրելիությունը

Դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Խումբը մինչև 2020թ. օգտագործել է պահուստի մատրիցան: Պահուստի դրույքաչափերը հաշվարկվում են՝ հիմնվելով հաճախորդների տարբեր սեգմենտների խմբավորումներից առաջացած ժամկետանց օրերի վրա, որոնք կորստի նույնատիպ մոդել ունեն (օրինակ՝ ըստ աշխարհագրական դիրքի, արտադրանքի տեսակի, հաճախորդի տեսակի և վարկանշի, ակրեդիտիվների և պարտքային ապահովագրության այլ տեսակների):

2021թ.-ից դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Խումբը դիտարկել է 365 օր չվճարված դեբիտորական պարտքերը:

Հետաձգված հարկի գնահատում

Խմբի ղեկավարությունը հավատացած է, որ Խումբը ապագայում կունենա բավարար հարկվող շահույթ, որպեսզի փոխհատուցի հետաձգված հարկային ակտիվները: Եթե Խումբը ապագայում չկարողանա ստանալ հարկվող շահույթ, ապա հետաձգված հարկային ակտիվները չեն փոխհատուցվի:

18 Ֆինանսական գործիքներ

18.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության, և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.8-ում:

18.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	2,267,127	1,762,864
Տրամադրված փոխառություններ	6,000	59,186
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	1,062,571	1,151,479
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	3,335,698	2,973,529

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ		
Ֆինանսական վարձակալություն գծով պարտավորություն	64,855	213,105
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	518,877	470,164
	583,732	683,269

19 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Խումբը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը: Խումբը չի ներգրավված սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Խումբը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

19.1 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Խումբը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, տոկոսադրույքային ռիսկի և որոշակի այլ գնային ռիսկերի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

բ) Արտարժութային ռիսկ

Խումբը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը: Խմբի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Խմբի՝ արտերկրյա ձեռքբերումներից և վարկային գործարքներից: Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու

պարտավորությունները, որոնք Խումբը ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև:

Հոդված 2021թ.	Հայկական դրամ	ԱՄՆ դոլար	Այլ
Ֆինանսական ակտիվներ			
Առևտրային դեբիտորական պարտքեր	1,842,746	398,929	25,452
Տրված փոխառություններ	6,000	-	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	456,852	469,708	136,011
	2,305,598	868,637	161,463
Ֆինանսական պարտավորություններ			
Ֆինանսական վարձակալություն	-	64,855	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	166,841	242,718	109,318
	166,841	307,573	109,318
Զուտ արդյունք	2,138,757	561,064	52,145

Հոդված 2020թ.	Հայկական դրամ	ԱՄՆ դոլար	Այլ
Ֆինանսական ակտիվներ			
Առևտրային դեբիտորական պարտքեր	1,337,310	359,979	65,575
Տրված փոխառություններ	3,000	56,186	-
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	1,015,354	108,040	28,085
	2,355,664	524,205	93,660
Ֆինանսական պարտավորություններ			
Ֆինանսական վարձակալություն	-	-	213,105
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	254,481	145,795	69,888
	254,481	145,795	282,993
Զուտ արդյունք	2,101,183	378,410	(189,333)

Խումբը հիմնականում ենթարկվում է ԱՄՆ դոլարի փոխարժեքի ազդեցությանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Խմբի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի 10% (2020թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2020թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2020թ.՝ 10%):

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Այլ արժույթի ազդեցություն	
	2021թ.	2020թ.	2021թ.	2020թ.
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն	56,106	37,841	5,214	(18,933)

գ) Տոկոսադրույքային ռիսկ

Խումբը ենթարկվում է տոկոսադրույքային ռիսկի, քանի որ ունի հաստատուն տոկոսադրույքներով փոխառու միջոցներ: Խումբը այս ռիսկը կառավարում է՝ ապահովելով համապատասխան չափի հաստատուն տոկոսադրույքով փոխառու միջոցներ:

դ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Խումբը ֆինանսական կորուստներ կարող է կրել:

Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Առավելագույն պարտքային ռիսկը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում՝ յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքով:

ե) Իրացվելիության ռիսկ

Խումբը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

20 Իրական արժեքի չափում

Խումբը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

21 Կապիտալի ռիսկի կառավարում

Խումբը իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունն առավելագույնին հասցնելով բաժնետերերի եկամուտները՝ փոխառու և կապիտալ միջոցների օպտիմալ համապատասխանություն ապահովելու միջոցով:

Խմբի կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, կուտակված շահույթը, ինչպես նաև փոխառու միջոցները, որոնք ներառում են փոխառությունները՝ բացահայտված ծանոթագրություն 11- ում:

Խմբի ղեկավարությունը պարբերաբար վերանայում է կապիտալի կառուցվածքը, որպեսզի ապահովի փոխառու միջոցների և սեփական կապիտալի մնացորդների առավելագույն օպտիմալ համապատասխանություն, որը վերլուծվում է՝ հաշվառելով ընդհանուր կապիտալը բաժանած ընդհանուր ֆինանսավորման վրա:

Հաշվարկը ներկայացվում է ստորև.

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդհանուր սեփական կապիտալ	4,865,756	4,677,593
Հանած՝ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(1,062,571)	(1,151,479)
Կապիտալ	3,803,185	3,526,114
Ընդհանուր սեփական կապիտալ	4,865,756	4,677,593
Ֆինանսական վարձակալություն	64,855	213,105
Ընդհանուր ֆինանսավորում	4,930,611	4,890,698
Կապիտալի և ընդհանուր ֆինանսավորման հարաբերակցություն	0.77	0.72

22 Պայմանականություններ

22.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

2020թ. մարտ ամսին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2019թ. դեկտեմբեր ամսին Չինաստանում բռնկված կորոնավիրուսը (COVID-19) դասակարգեց որպես համավարակ: Կորոնավիրուսն արդեն իսկ էական ազդեցություն է ունեցել համաշխարհային տնտեսության և խոշոր ֆինանսական շուկաների վրա:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և կենտրոնական բանկը տնտեսության վրա կորոնավիրուսի ազդեցությունը մեղմացնելու նպատակով իրականացնում են շարունակական միջոցառումներ: Ի թիվս այլ միջոցառումների, վերջիններս ներառում են նաև տուժած ճյուղերի և անհատների փոխառությունների սուբսիդավորում և վարկային «արձակուրդներ»:

Խմբի ղեկավարությունը գտնում է, որ իրացվելիության ընթացիկ մակարդակը բավարար է կայուն գործունեության համար: Խումբը պարբերաբար վերանայում է իր իրացվելիության մակարդակը և, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է կիրառել իրացվելիության աջակցության համապատասխան գործիքակազմ:
Իրավիճակն Հայաստանի Հանրապետությունում էլ ավելի է սրվել Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի արդյունքում: Չնայած կնքված զինադադարի համաձայնագրին՝ դեռևս անորոշ են պատերազմի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա թե կարճաժամկետ, և թե երկարաժամկետ առումներով:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Խմբի ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Խմբի գործունեության վրա կարող են տարբերվել Խմբի ղեկավարության ներկա սպասումներից:

Տվյալ համախմբված ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Խմբի գործունեության վրա:

22.2 Պայմանական պարտավորություններ

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 8-ում, համաձայն ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 22-ի հ.923-Ն որոշման, Մայր Ընկերությունը ձեռք է բերել բաժնետոմսեր: Վերոհիշյալ որոշումը ՀՀ քրեական ոստիկանության գլխավոր վարչությունում հարցաքննվել է 2020թ՝. գնման գինը սակարկվում է, փորձ է արվում վերագնահատել այն: Քննության ընթացքում Խմբի բնականոն աշխատանքը չխաթարելու կամ սահմանափակումներ չկիրառելու համար, Մայր Ընկերությունը ՀՀ ոստիկանության դեպոզիտային հաշվին փոխանցել է 250,000 հազար դրամ:

Խմբի ղեկավարությունը կարծում է, որ ավանդը կվերադարձվի, հետևաբար վճարված գումարը ներառվել է ակտիվների մեջ: Եթե այս գործի արդյունքները տարբերվեն ղեկավարության

գնահատականից, ապա այս գումարը պետք է ճանաչել որպես ծախս, որը կարող է էական ազդեցություն ունենալ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

22.3 Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է: Ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանի Հանրապետությունում դեռ չեն կիրառվում: Խումբը՝ իր ակտիվների, գործունեության ընդհատման կամ երրորդ կողմերի պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին Խմբի գույքի կամ գործառնությունների պատահարներից հասցված վնասի ապահովագրություն չունի: Քանի դեռ Խումբը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական դրության վրա:

22.4 Հարկեր

Հայաստանի Հանրապետությունում հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոհիշյալ հանգամանքները կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել:

23 Հետհաշվեկշռային իրադարձություններ

Խումբը տնտեսական ու առևտրային կապեր ունի Ռուսաստանում և Ուկրաինայում գործող ընկերությունների հետ: Հակամարտության արդյունքում հնարավոր է

- Մատակարարումների ընդհատում,
- Առևտրական ու տնտեսական գործունեության սահմանափակումներ,
- Ճանապարհորդության սահմանափակումներ:

Տվյալ համախմբված ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Խմբի գործունեության վրա:

24 Գործարքներ կապակցված կողմերի միջև

24.1 Վերահսկողություն և գործարքներ

Խումը վերահսկվում է Մայր ընկերության մասնակիցների կողմից:

Խմբի գործարքները կապակցված կողմերի հետ բացահայտված են ստորև.

Անվանում	Գործարք	Առ 31.12.2020	Գործարքի	Առ 31.12.2021
	հազ. դրամ		արժեք	
ԳԱԳԻԿ ԱՂԱՋԱՆՅԱՆ	Կրեդիտորական պարտքեր մասնակիցներին	76,342	1,604,000	55,903
ԱՐՍԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ		95,179	1,604,000	12,792

ԱՐՍԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ	Առևտրային դեբիտորական պարտքեր	-	405,047	-
ԳԱԳԻԿ ԱՂԱՋԱՆՅԱՆ		-	342,439	-
APAVEN GEORGIA LTD	Առևտրային կրեդիտորական պարտքեր	69,508	114,877	56,726
ԳԱԳԻԿ ԱՂԱՋԱՆՅԱՆ	Տրված կանխավճարներ	-	584	-

24.2 Գործարքներ ղեկավարության հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը,

Հազար դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ	33,221	31,419
	33,221	31,419

25 Երաշխիքներ

Մայր Ընկերությունն ունի տրված երաշխավորություն Ինեկոբանկ ՓԲԸ-ում 1,500,000 ԱՄՆ-ի դոլլարի չափով:

26 Համախմբման հիմքերը

Խմբի ֆինանսական հաշվետվությունները համախմբում են մայր ընկերության և իր դուստր ընկերության՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունները: Դուստր ընկերության հաշվետու ամսաթիվը դեկտեմբերի 31-ն է:

Համախմբման ժամանակ Խմբի ընկերությունների միջև բոլոր գործարքները և մնացորդները բացառվում են, ներառյալ Խմբի ընկերությունների միջև գործարքների արդյունքում չվաստակած օգուտները և չկրած վնասները: Երբ ակտիվի ներխմբային վաճառքից առաջացող չկրած վնասը համախմբման ժամանակ հակադարձվում է, հիմքում ընկած ակտիվը նաև ենթարկվում է արժեզրկվածության գծով ստուգման՝ Խմբի տեսանկյունից:

Տարվա ընթացքում ձեռք բերած կամ օտարած դուստր ընկերության շահույթը կամ վնասը և այլ համապարփակ արդյունքը ճանաչվում են ձեռքբերման ամսաթվից կամ մինչև օտարման ամսաթիվը, որը կիրառելի է:

Խումբը դուստր ընկերության ընդհանուր համախառն եկամուտը կամ վնասը բաշխում է մայր ընկերության սեփականատերերի և չվերահսկող բաժնեմասերի միջև՝ առաջնորդվելով սեփականության համապատասխան բաժնեմասով: